

## ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏՐԱՆՏՖՈՐՄԱՑԻԱՆ ԱՍԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

### Ա. Ֆ. ԱՍՐԳԱՅԱՆ

Վերջին տարիներին տրանսֆորմացիայի հիմնահարցը ուսումնասիրման առարկա է դարձել գիտնականների համար: Տրանսֆորմացիան հիմնարար հասկացություն է, որն օգտագործվում է գիտության տարբեր բնագավառներում՝ ֆիզիկայում, քիմիայում, ինչպես նաև տնտեսագիտության, փիլիսոփայության, հոգեբանության, գրականության մեջ: Տրանսֆորմացիան լատիներեն բառ է (transformatio), որը մի դեպքում նշանակում է փոխակերպում, կերպափոխում, մյուս դեպքում՝ փոփոխական էներգիայի բարձրացում կամ իջեցում: Տրանսֆորմացիայի հոգեբանական վերլուծությունը հոգեբանության կարևորագույն, սակայն քիչ ուսումնասիրված հիմնախնդիրներից մեկն է: «Տրանսֆորմացիան ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է այն դիտել որպես վերածնող գործընթաց, որի ժամանակ իրականանում է անձի հոգեկան աշխատանքը»<sup>1</sup> հոգեկան նախնական բովանդակությունը փոխակերպելով այլ բովանդակության:

Հոգեբանական տրանսֆորմացիայի գործընթացում կարելի է տարբերակել հետևյալ ընդհանուր կառուցվածքը՝

1. Տրանսֆորմացիայի առարկան կամ օբյեկտը:
2. Տրանսֆորմեր կամ փոխակերպված առարկա, օբյեկտ:
3. Տրանսֆորմացիայի աշխատանքը:
4. Տրանսֆորմացիայի ժամանակային կողմը:
5. Տրանսֆորմացիայի ճյուղերը՝ երկու ենթագործընթացներով՝ ա) վերընթաց տրանսֆորմացիա, բ) վարընթաց տրանսֆորմացիա:

Այս հոդվածում նպատակ ունենք անդրադառնալու տրանսֆորմացիայի մեկ ձևի՝ ինքնահիրականացնող տրանսֆորմացիային՝ կապված գրողական արվեստի հետ:

Ստեղծագործության մեջ արվեստագետը դրսևորում է իր պոտենցիալ հնարավորությունները: Ըստ Ն. Ռոջերսի՝ ստեղծագործությունն ուժեղացնում է անձի ինքնությունը. «Ստեղծագործությունը մի տրանսֆորմացնող ուժ է, որը խթանում և բարձրացնում է անձի դրական ինքնագնահատականը և ապահովում անհատի ինքնության զարգացման ընթացքը»<sup>2</sup>:

Բազմաթիվ հոգեբաններ գտնում են, որ ստեղծագործական գործընթացը մի շարք կողմերով համընկնում է այն գործընթացի հետ, որը բացահայտվում է հոգեթերապիայում: Օրինակ, Կ. Ռոջերսի կարծիքով, «Ստեղծագործության հիմնական աղբյուրը դրսևորվում է այնպես, ինչպես հոգեթերապիայի վերականգնող ուժը»<sup>3</sup>, այսինքն՝ դա այլ բան չէ, քան իր մեջ եղած հնարավորությունների իրականացման կամ, որ նույնն է, մարդու ինքնահիրականացման ձգտումը: Ստեղծագործական գործընթացի ժամանակ անընդերափանցում է իր անգիտակցականի խորքերը, որպեսզի ինտելեկտի և դառնա ամբողջական: Միայն այդ դեպքում է, որ նա կարող է զգալ ինչպես հասարակության ու մարդկության, այնպես էլ բնության հետ իր ունեցած հուզող սերտ կապերի ամբողջ հարստությունը: Ստեղծագործությունը նման է ազատության, մեկ անգամ փորձելով՝ այլևս հնարավոր չէ առանց դրա ապրել: Դա տրանսֆորմացնող, ապաքինող գործընթաց է՝

<sup>1</sup> М. М. Магомед-Эминов. Трансформация личности. М., 1988, с. 218.

<sup>2</sup> "Гуманистическая и трансперсональная психология". Хрестоматия. Сост. К. В. Сельченко. Минск-Москва, 2000, с. 296.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 297:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 297-300:

Բժշկության մեջ տրանսֆորմացիան օգտագործում են թերապևտիկ նպատակներով: Օրինակ, Լ. Ռեյնխարդը ներկայացնում է ԱՄՆ-ում այժմ ամենատարածված հոգեբանական վարժանքները (թերնինգներ), որոնց նպատակն է «պայթեցնել» միտքը, տալ մարդկանց անկրկնելի ապրումներ, որոնք կտրանսֆորմացնեն նրանց կյանքը<sup>5</sup>: Պետք է նշել, որ ինչպես ընդհանուր, այնպես էլ բժշկական հոգեբանության մեջ ուսումնասիրվում է անձի ես-ը, նրա բազմազանությունն ու բազմիմաստությունը՝ հոգեկանի տարբեր մակարդակներում: Ըստ Ռ. Լենգի՝ բժշկական հոգեբանության մեջ ուսումնասիրվում է այն անձի ես-ը, որը կյանքում չի գտնում իր տեղը, անվստահ է զգում իրեն, ես-ը պառակտվում է, և տրանսֆորմացիան օգտագործվում է մարդկանց հոգեկան հավասարակշռությունը պահելու համար: Այդ մարդկանց ես-ի պառակտումը հոգեկան խանգարվածության նշան է, և հոգեկան մի վիճակի փոխակերպումը մյուսի այլ իմաստ է ստանում:

Մյուս կողմից, սակայն, պետք է նշել, որ ես-ի մասնատումը, ավելի ճիշտ ամբողջական «ես-կոնցեպցիայի» մեջ «ես-պատկերների» բազմազանությունը, Ռիվանդազին երևույթ չէ, և տրանսֆորմացիայի գործընթացն էլ բոլորովին այլ իմաստ ունի: Հոգեբաններն առանձնացնում են տարբեր «ես-պատկերներ»: Օրինակ՝ Մ. Ռոզենբերգը տարբերակում է մի քանի ես-եր՝ «առկա ես», «ցանկալի ես», «ներկայանալի ես», «դիմամիկ ես», «ֆանտաստիկ ես», «իդեալական ես»: Այս բոլոր պատկերները բնութագրում են անհատի ներաշխարհը և արտահայտում են նրա կյանքի փորձը, այլ մարդկանց հետ ունեցած իրական կապերն ու փոխհարաբերությունները: Ես-ի բազմազան լինելը անձի հասունության նշան է: Եթե XX դարի 50-60-ական թվականներին կլինիկական կողմնորոշում ունեցող հետազոտություններում իրական և ցանկալի ես-երի առկայությունը անձի հոգեկանում սովորաբար դիտվում էր որպես իջած ինքնագնահատականի ցուցանիշ և անցանկալի էր համարվում, ապա հետագայում պարզվեց, որ ես-ի բազմազանությունն ու բազմիմաստությունը արտացոլում է անձի բնականոն զարգացման գործընթացը, ընդ որում, այն անհամեմատ ավելի բարձր աստիճանի է ստեղծագործական, մտավոր և քարոյական զարգացած հատկանիշներով մարդկանց, քան մյուսների մոտ<sup>6</sup>: Արվեստագետը, մասնավորապես գրողը, իր ես-ը արտացոլում է ստեղծագործության մեջ, փոխակերպելով իր տարբեր հոգեվիճակները՝ կարծես ինքնըստիճքյան հոգեթերապիա է կատարում: Գրողը չի դիմում բժշկի, իր ապրումները, ես-ի մասնատվածության զգացումն ինքն է յուրովի փոխարկում իր գործերում, նա ինքն է ստանձնում հոգեթերապևտի դերը: Թերևս սրանով է գեղարվեստական ստեղծագործության մեջ գործող տրանսֆորմացիայի գործընթացը մոտենում բժշկականին:

Ստեղծագործության հոգեբանության մեջ տրանսֆորմացիայի հիմնախնդրի հետազոտումը պետք է սկսել արվեստագետի անձի ուսումնասիրությունից, քանի որ նա ազդում է ստեղծագործության վրա և՛ անմիջականորեն, և՛ միջնորդավորված: Արվեստագետն իր անհատականության կնիքն է դնում իր ամբողջ ստեղծագործության վրա: Մի առիթով Ռենուարին հարցնում են, թե որն է ամենակարևորն արվեստում՝ «ինչպե՞ս»-ը, թե «ի՞նչ»-ը: Ռենուարը պատասխանում է. «Կարևորը՝ ո՛վ է»: Իսկ Է. Նոյմանը գրում է, որ գեղարվեստական ստեղծագործությունը մարդ չէ, այլ ինչ-որ վերանձնային բան: «Ի՜նչ իր է, ոչ թե մարդ, նշանակում է այն չի կարելի գնահատել անձնային չափանիշներով: Անկասկած, արվեստի իսկական ստեղծագործության առանձնահատուկ նշանակությունն այն է, որ նա դուրս է եկել անձնային սահմանափակումներից և անգամ իր սեփական ստեղծողի անձնային ազդեցության համար դարձել անհասանելի<sup>7</sup>: Իհարկե, գեղարվեստական երկն ինքնին պետք է ունենա հասարակական հրնչելություն, վեր լինի անձնական թեմաներից, մյուս կողմից՝ չի կարելի թերագնահատել հեղինակի անձի խնդիրը, քանի որ հեղինակն իր ստեղծագործության մեջ կամա թե ակամա դնում է իր ես-ից մի մաս: Անզլիացի նշանավոր բանաստեղծ Թ. Էլիոթը գրում է. «Կատարվում է անընդմեջ մի հրաժարում ինքն իրենից այն պահին, երբ նա նվիրված է ավելի արժեքավոր մի բանի: Արվեստագետի զարգացումը շարունակական ինքնագործողությունն է, անձնականության շարունակական մերժում... Որքան կատարյալ է արվեստագետը, այնքան լիովին է տարանջատված տառապող մարդն ու ստեղծագործ միտքը<sup>8</sup>»:

<sup>5</sup> Տե՛ս Լ. Քայնհարդ, *Трансформация*, Минск-Москва, 1997:

<sup>6</sup> Տե՛ս Ի. Կոն, *Открытие «Я»*, М., 1978:

<sup>7</sup> Տե՛ս Կ. Գ. Յոն, *Э. Нойман, Психоанализ и искусство*, М., 1996, էջ 16:

<sup>8</sup> Տե՛ս Ս. Էլիոթ, *Մտայլ երկիրը*, Եր., 1991, էջ 109-110:

Մարդը վառ գունավորված է ներգետնի համակարգ է, որն անընդհատ փորձում է հասնել հանգստության վիճակի: Այդ է ներգիայի գաղտնի ֆունկցիան է՝ վերականգնել օրգանիզմի հավասարակշռությունը: Հոգեբանորեն լարվածությունն արտահայտվում է անհանգստության և ընկճվածության զգացումով: Այդ զգացումը ծագում է այն պահանջմունքից, որ ինչ-որ ձևով պետք է վերականգնել հավասարակշռությունը և վերացնել լարվածությունը: Մարդու խնդիրն է՝ բավարարել այդ պահանջմունքները՝ չմտնելով կոնֆլիկտի մեջ ինքն իր, այլ մարդկանց և շրջապատող աշխարհի հետ: Թուրքանչյուր անձ ձգտում է ներդաշնակության և հատկապես հոգեկան ներդաշնակության, կոնֆլիկտներից, տվյալառնություններից զերծ ես-ի ամբողջականության: Միայն ներքին անհավասարակշռությունից, կուտակված լարվածության թուլացումից կամ իսպառ վերացումից հետո անձը կարող է զգալ իր և բնության ներդաշնակությունը: Իսկ ո՞րն է հոգեբանական տրանսֆորմացիայի դերը մարդու հոգեկան ներդաշնակության հասնելու գործընթացում: Հոգեբանության մեջ տրանսֆորմացիան, ինչպես արդեն մենք ենք, մի դեպքում մեկնաբանվում է որպես հոգեկան մի բովանդակությունը այլ բովանդակության փոխակերպող ձևափոխում, մեկ այլ դեպքում՝ հոգեկան ներքին լարվածությունը կարգավորող գործընթաց: Մարդը և՛ գիտակցորեն, և՛ ենթագիտակցորեն տրանսֆորմացում է իր ես-ը՝ դրանով իսկ ձգտելով հասնել հոգեկան և ֆիզիկական ուժերի, իր «ես-կոնցեպցիայի» ամբողջությանն ու միասնությանը:

Տարբեր կերպ կարելի է մեկնաբանել ստեղծագործությունը՝ ինքնաստեղծում (հոգևոր, ֆիզիկական, իմացական հնարավորությունների իրականացում), ինքնասպառում (ուժերի կորուստ, անքնություն, բայց և փայլատակում երջանկությունից), ինքնահաստատման միջոց կոնկրետ գործերի մեջ: Բոլոր դեպքերում մենք գործ ունենք նաև հոգեբանական փոխակերպումների հետ, որոնք նպատակահարմար է միավորել մեկ ձևի մեջ՝ որպես ինքնահրակահանգող տրանսֆորմացիա: Այն, ինչին գրողը չի հասել կյանքում, փորձում է արտացոլել ստեղծագործության մեջ, այն ցանկություններն ու երազանքները, որոնք չեն իրականացել, փորձում է իրագործել ստեղծագործության մեջ, այն ուժերը, որոնք չեն սպառվել կյանքում, զգացումներն ու ապրումները, որոնք կսկիծ և դառը պահեր են պատճառել գրողին, ցանկանում է առարկայացնել երկերում, կարծես հեռացնել իրենից: Եվ ամեն ստեղծագործության մեջ նա ինքնահրակահանգում է իրեն, իր ես-ը: Այդ տրանսֆորմացիայի միջոցով գրողը փորձում է ձեռք բերել ներդաշնակության զգացողություն, հասնել իր ես-ի ամբողջությանը: Ըստ Ա. Մալրուի՝ ինքնահրակահանգումը սեփական հնարավորությունների զարգացման գործընթաց է: Դա ենթադրում է սեփական բանականության և ընդունակությունների օգտագործում և աշխատանք, որպեսզի լավագույնս կատարես այն, ինչ դու ցանկանում ես: Տաղանդը և խելքը դեռևս ինքնահրակահանգում չեն: Դա գործընթաց է, որը չունի վերջ, դա կյանքի ձև է, աշխատանքի միջոց և որոշակի վերաբերմունք աշխարհի նկատմամբ: Ռ. Ասաջիտին ինքնահրակահանգումը բացատրում է ինքնադրսևորման երկու ձևով. մի դեպքում՝ որպես հոգեկան աճ և հասունացում, մարդու թաքնված հնարավորությունների արթնացում և դրսևորում, մյուս դեպքում՝ սեփական ես-ի ըմբռնում, ես-ի գիտակցում՝ որպես հոգևոր կենտրոնի սինթեզող:

Մարդուն դեռևս հին դարերից միշտ էլ հետաքրքրել է հուզել է իր ես-ը ճանաչելու խընդիրը: Այն մեր օրերում էլ մնում է խիստ արդիական: Բոլոր մարդիկ ներքուստ ունեն մի պահանջմունք՝ լինել սեփական ես-ի հետ միասնական, ներդաշնակ, որպեսզի կյանքում իրենց զգան հաստատուն, գիտակցեն սեփական անձի կարևորությունը, անկրկնելիությունը: Է. Ֆրոյդը դա անվանել է «նույնական (իդենտիկ) լինելու պահանջմունք»:

«Մարդը միշտ գնում է ներքին ներդաշնակության հասնելու ճանապարհով: Պատկերացումները, զգացմունքները կամ գաղափարները, մտնելով հակասության մեջ անհատի այլ պատկերացումների, զգացմունքների կամ գաղափարների հետ, խաթարում են անձի ներդաշնակությունը, ստեղծում հոգեբանական անբարեհարմարության վիճակ: Ենթին ներդաշնակության հասնելու պահանջ զգալով՝ մարդ պատրաստ է ձեռնարկելու տարբեր գործողություններ, որոնք կօգնեն վերականգնելու կորցրած հավասարակշռությունը»<sup>10</sup>, - գրում է Ռ. Աբրահը: Գրողի համար ներքին ներդաշնակությունն ձեռք բերելու ուղիներից մեկը դառնում է

<sup>10</sup> Տե՛ս Э. Берн, Люди, которые играют в игры. Игры, в которые играют люди, М., 2000, էջ 45-46:

<sup>11</sup> Р. Бернс. Развитие Я-концепции и воспитание. М., 1986, с. 40.

ստեղծագործությունը: Ստեղծագործությունը լարված և կուտակված հոգեկան ուժերի և էներգիայի լիցքաթափման միջոց է: Բոլոր ժամանակներում իմաստուն այրերի կողմից արվեստը համարվել է մարդու ներաշխարհը հանգստացնելու և ներդաշնակություն ստեղծելու մի միջոց, նաև իրենց՝ ստեղծագործող անձանց համար: Երբ գրողի հոգում ծանր թախիծ է, մեծ շափերի հասնող դժբախտության զգացում, արվեստը դառնում է միակ հանգրվանը, որտեղ նա կարող է թոթափել իր ծանր ապրումներն ու համակած զգացողությունները և գտնել հանգրստություն, հոգեկան ներդաշնակություն: Այդ նույն տառապանքը փոխակերպվում է գրքի, երաժշտական ստեղծագործության, նկարչական կտավի և այլն: Գրողը, իրեն անհանգստացնող մտքերը, բարդույթները, հոգու տվայտանքները հանձնելով թղթին, փոխակերպելով գրական կերպարների, առարկայացնում է դրանք, կարծես օտարում իրենից: Դրանով իսկ գրողն ինքնահրականացնում է իրեն, իր ես-ը: «Արվեստը որոշ ստեղծագործող անձանց համար ունի հոգեթերապևտիկ նշանակություն, իրականացնելով ապրումները խոսքի և կերպարի մեջ՝ հնարավորություն է տալիս նրանց՝ ազատագրվելու գիտակցական և ենթագիտակցական խաթարող ազդակներից՝ թեթևացնելով տառապանքները: Չարտահայտված ապրումների հետևանքները կարող են շատ ողբերգական լինել արվեստագետի համար»: Երկն ավարտելուց հետո հեղինակը երկար ժամանակ, գուցե և ընդհանրապես, նորից չի կարդում այն, չի անդրադառնում, որովհետև դա ծանր զգացումներով է համակում գրողին, որովհետև այդ գործերում նրա «մերկ» ես-ն է, փոխակերպված խոհերն ու զգացմունքները, որոնցից նա փորձել է ազատվել, որպեսզի ինքնահրացնի իր անձը, անցնի նոր կյանքի: Գրողը փորձում է նորովի արժեքավորել և զնահատել սեփական պատկերացումներն աշխարհի, մարդկանց, իր մասին, այսինքն՝ հասնել իր «ես-կոնցեպցիայի» նորովի ընկալմանը:

Ընդհանրացնելով՝ ցանկանում ենք ընդգծել հետևյալը. գեղարվեստական ստեղծագործությունը օբյեկտիվ իրականության արտացոլման բարդ և ինքնատիպ մի միջոց է: Արվեստագետն իր ստեղծագործության մեջ բացահայտում է ոչ միայն իրականության կապերն ու օրինաչափությունները, միջանձնային փոխհարաբերությունները, այլև իր ներաշխարհը, ես-ը: Գեղարվեստական գործերում իրագործվում է հեղինակի ինքնադրսևորման պահանջմունքը, գրական կերպարներն արտահայտում են նրա անձի այս կամ այն կողմերը, գիտակցական և անգիտակցական մղումները, փոխակերպվում է նրա ես-ը՝ իր տարբեր «ես-պատկերներով»: Եվ որպեսզի արվեստագետը կարողանա դառնալ իր ժամանակակիցների մտքերի և ցանկությունների արտահայտիչը, նա պետք է բարձրանա իր ներքին բոլոր սահմանափակումներից և իր իսկ ներսում եղած քառսային վիճակներից: Եվ այստեղ մեծ դեր ունի հոգեբանական տրամաֆորմացիան:

**С. Ф. САРКИСЯН - Психологическая трансформация в творческом процессе.**

В статье рассматриваются вопросы, касающиеся психологической трансформации и творческой деятельности, в частности писателя. Поставлен вопрос изучения психологической трансформации биографических данных в литературном творчестве писателя. Отмечается, что творчество для художника имеет огромное терапевтическое значение, что, несомненно, связано с психологической трансформацией.